

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՀՈՒՇԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Լրացավ էջմիածնի Գևորգյան Շեմարանի 130-ամյակը: Դժվար է պատկերացնել մեկ այլ կրթական հաստատություն, որ XIX-XX դարերի սահմանագծին այնքան կարևոր դեր խաղացած լինի հայ մտավոր կյանքի ծավալման ասպարեզում, որքան Գևորգյան Շեմարանը: Այն ոչ միայն դպրոց էր, այլ մաս հայագիտական մտքի, մանկավարժության, հայոց լեզվի ու գրականության զարգացման և կազմակերպական կենտրոն: Շեմարանի շրջանավարտներից շատերը դարձան եկեղեցական կյանքի ու հայ մշակույթի նշանավոր դեմքեր:

Շեմարանի շրջանավարտների մեջ իր ուրույն տեղն ունի մաս հայտնի եկեղեցական գործիչ, հայագետ Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը: Չնայած իր հանրաճանաչությանն ու խաղացած նշանակալից դերին, որ ունեցել է Տիրայր Սրբազանը, ինչպես եկեղեցուց ներս, այնպես էլ հայագիտության բնագավառում նա անարդարացիորեն դուրս է մնացել հետազոտողների հետաքրքրասիրությունների շրջանակից:

«Էջմիածին», «Սիոն» և այլ պարբերականներում Սրբազանի հիշատակին տպագրված մահախոսականները վիճակը չեն փոխում, մանավանդ դրանցում կենսագրական շատ տվյալներ շփոթված են ու չեն համապատասխանում իրականությանը:

Այսօր ընթերցողին ներկայացնելով Գևորգյան Շեմարանի մասին Տիրայր Սրբազանի անտիպ հուշերից մի հատված, պարտք ենք համարում համառոտակի անդրադառնալ մաս ճեմարանի ավագ սերնդի այդ ինքնատիպ ներկայացուցչի կյանքին ու գործունեությանը¹:

Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը (Տիգրան Հովսեփի Մելիք-Մուշկատ-բարյան) ծնվել է 1867 թ. ապրիլի 21-ին Արցախի այժմյան Նորաշեն գյուղում (ԼՂՀ Մարտունո շրջանում): Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական վարժարանում, ապա սովորել Օուշիի թեմական դպրոցում: 1879 թ. ընդունվել և 1885 թ. ավարտել է Գևորգյան Շեմարանի դպրոցական բաժինը: Այնուհետև ուսումնառությունը շարունակել է ճեմարանի լսարանական բաժնում (1885-1888): 1890 թվականից Մայր Աթոռի միաբան է: Դասավանդել է Գևորգյան Շեմարանում և Երևանի թեմական դպրոցում, ապա վարել Ղարաբաղի թեմական դպրոցի տեսչությունը: 1894 թ. Կոմիտասի, Հուսիկ Ջոհրաբյանի, Եզնիկ Գյանջեցյանի և Բենիկ Տեր-Եղիազարյանի հետ Ս. Գալանե վանքում ձեռնադրվել է արքեպ:

1895 թ. նշանակվել է Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ և միաժամանակ Ս. Պետերբուրգի ու Մոսկվայի հայկական եկեղեցիների քարո-

¹ Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի կենսագրական փյույվները բաղել ենք Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող նրա արխիվի նյութերից (ֆոնդ 161):

զիչ և տեսուչ: Նույն՝ 1895 թ. ընդունվել է Ս. Պետերբուրգի համալսարան, որտեղ սովորել է պատմա-քանասիրական և իրավագիտության ֆակուլտետներում: Միաժամանակ սովորել է նաև Ռուսական բարձրագույն Հոգևոր սեմինարիայի եկեղեցական իրավագիտության ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո, 1899 թ., ուսումը կատարելագործելու նպատակով, մեկնել է Եվրոպա, որտեղ հետևել է Օքսֆորդի և Սորբոնի համալսարանների արևելագիտական և աստվածաբանական դասընթացներին:

Ուսումնառությունն ավարտելուց հետո ճշմանակվել է Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի վիճակային հոգևոր խորհրդի (կոնսիստորիա) փոխնախագահ և թեմի առաջնորդական փոխանորդ: Ծուրջ 15 տարի (մինչև 1895 թ.) հաջողությամբ վարելով թեմի գործերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի բարձր կարգադրությամբ ճշմանակվել է Թիֆլիսի Ս. Սարգիս եկեղեցու քարոզիչ, ապա կանչվել է Մայր Աթոռ: 1915 թ. հոկտեմբերի 19-ի թիվ 1804 Հայրապետական Կոնդակով ճշմանակվել է Կաթողիկոսարանի դիվանի դիվանապետ²: Պաշտոնի բերումով գործում մասնակցություն է ցուցաբերել «Եղբայրական օգնության» զլխավոր կարգադիր հանձնաժողովի աշխատանքներին, ընտրվել հանձնաժողովի փոխնախագահ (1915-1916 թթ.): Նշանակվել է նաև «Արարատ» ամսագրի խմբագիր (1916-1918)³:

1916 թ. մարտի 9-ին Ս. Հովհաննիսյան վանքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով Ասորպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թադևոսյանը ծայրագույն վարդապետական աստիճան է շնորհել Տիրայր և Գարեգին վարդապետներին⁴:

1917 թ. ապրիլի 11-ին Գևորգ Ե-ի կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս՝ Գևորգյան Ընմարանի տեսուչ Գարեգին Հովսեփյանցի, Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Տեր-Գրիգորյանի և Սինդի անդամ Գևորգ Չորեքչյան վարդապետների հետ միասին: Նույն թվականին ճշմանակվել է Սինդի անդամ: Մի խումբ բարձրաստիճան հոգևորականների հետ միասին (Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան, Գևորգ եպիսկոպոս Չորեքչյան, Մատթեոս եպիսկոպոս Մաթևոսյան, Գյուտ վարդապետ Տեր-Ղազարյան) մասնակցել է այն հանձնաժողովին, որ ձեռնամուխ է եղել քաղաքական մոր իրադրության պայմաններում «Положение»-ի փոփոխման, թեմական ժողովների և խորհրդակցությունների գումարման, առաջնորդների ընտրության մոր կանոնադրության մշակման աշխատանքներին: 1917 թ. ընթացքում նրա գործում մասնակցությամբ են ստեղծվել «Թեմական ժողովների ժամանակավոր հրահանգների ծրագիրը», ինչպես նաև միաբանական ուխտի ներքին կանոնադրության նախագիծը:

1918 թ. մարտ-մայիս օրհասական ամիսներին Տիրայր Սրբազանն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին էր: Հայտնի է նրա անխոց մասնակցությունը գաղթականներին տեղավորելու, որբահավաքի գործի կազմակերպման, ինչպես նաև Մայր Աթոռի տնտեսական վիճակը բարվոքելու ուղղությամբ ձեռնարկված քայլերին: Նա մասնակցություն է ունեցել նաև մոր տոմարն ընդունելու խնդիրը քննող կոմիտեի (1918) և հատկապես Գևորգյան Ընմարանի վերաբացման կապակցությամբ ստեղծված հանձնաժողովի (1919-1920 թթ.)

² «Արարատ», 1915, էջ 722:

³ Անդ, 1916, էջ 23, 39:

⁴ Անդ, էջ 210:

աշխատանքներին:

1921 թ. Տիրան եպիսկոպոսը նշանակվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ (1921-1928 թթ.): Նրա առաջնորդության տարիներին ԱՄՆ-ի ամբողջ տարածքում կազմակերպվել են կիրակնօրյա դպրոցներ, հայրենասիրական, երիտասարդական ու հայուհյաց միություններ: Նրա ջանքերով Եկեղեցու շուրջն են համախմբվել ազգային կազմակերպություններն ու մարմինները: Թեմը զգալի հաջողություններ է արձանագրել մշակութային ու տնտեսական կյանքում, որը մեծապես նպաստել է նոր եկեղեցիների հիմնադրման ու հայանպաստ գործունեության ծավալմանը:

1928 թ. անցնելով վաստակած հանգստի՝ Տիրան Սրբազանն իրեն ամբողջությամբ նվիրել է հայագիտական ու թարգմանական աշխատանքներին: Ազատորեն տիրապետելով ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և վրացերեն լեզուներին, ունենալով փայլուն վերլուծական միտք և կոռ տրամաբանություն՝ Սրբազանը զբաղվել է նաև գիտահետազոտական աշխատանքներով: Մասնավորապես նրա աշխատանքները վերաբերում են երեք հիմնական բնագավառների՝ հայագիտություն, թարգմանական աշխատանքներ և աստվածաբանություն: Ցավոք, նրա ստեղծած վիթխարի գրական ժառանգությունից քիչ բան է հայտնի: Մեծի մասամբ այն անտիպ է և գտնվում է Սրբազանի թողո՞նում, որը հիմնականում հանգրվանել է Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում:

Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի աստվածաբանական ժառանգությունն ամբողջովին անծանոթ է, քանզի այս թեմայով գրված նրա բոլոր երկասիրություններն էլ անտիպ են: Ինչպես, օրինակ՝ «Սուրբ Գիրքը. ծագումը, աղբյուրները, կազմությունը», «Պատմություն քրիստոնեական եկեղեցու» (մինչ 461 թվականը) և այլն: Նա աշխարհաբար է թարգմանել և, ուսումնասիրությամբ ու մեկնաբանություններով հանդերձ, տպագրության պատրաստել «Գործք առաքելոց», «Թուղթ առ Գաղատացիս», «Թուղթ առ Հռոմայեցիս» բնագրերը, ինչպես նաև «Սաղմոսները»: Սրբազանը հայերեն է թարգմանել հայոց հին և միջնադարյան պատմության համար չափազանց կարևոր արժեք ներկայացնող այնպիսի գործեր, ինչպիսիք են Յուստինոսի «Քաղվածքներ», «Աստվածային Օգոստոսի գործերը» (Գայոս Օկտավիանոս Օգոստոսի «Կտակը»), Ամմիանոս Մարկելլիանոսի «Գործունեություններ», Աբդուլ Ֆարաջի «Ժամանակագրություն» և այլ երկասիրություններ:

«Արարատի» էջերում տպագրվել են եվրոպական հայագետների հետաքրքրություններ կապացնող մի շարք ուսումնասիրությունների նրա թարգմանությունները, ինչպես, օրինակ՝ Ֆրեդերիկ Կոնիքերի «Հովսեփոսի հին հայերեն թարգմանությունը»⁵, Մաքս վան Բերխսենի «Մոսկովի աթաբեկ Լուկոի հիշատակին կանգնեցված մահարձաններն ու նոցա արձանագրությունները»⁶, Ռոնե Բիմոնի «Հայերի բնաջնջումը. գերմանական մեթոդ - թուրքական գործ»⁷, Կ. Ցվետկովի «Այց Քեմբրիջի համալսարան»⁸ և այլն:

Տիրան արքեպս. Տեր-Հովհաննիսյանը հայտնի է նաև անգլերենից, ֆրանսերենից և

⁵ Անդ, 1908, էջ 781-791:

⁶ Անդ, 1915, էջ 616-633:

⁷ Անդ, 1916, էջ 65-86, 233-260:

⁸ Անդ, էջ 393-404: 1917, էջ 129-147:

ռուսերենից կատարված գեղարվեստական մի շարք երկերի թարգմանություններով: Արևմտաեվրոպական և ռուսական գրողներից շատերի ստեղծագործություններին հայ ընթերցողներն առաջին անգամ ծանոթացել են նրա բարձրարժեք թարգմանությունների միջոցով: Հայկական պարբերական մամուլի տարբեր օրգաններում՝ Տ.Վ., Տ.Ծ.Վ., Տիրայր Ծ.Վ., Տիրայր Ծ. Վարդապետ, Տիրայր Եպիսկոպոս, Տիրայր Տեր-Հովհաննիսյան ստորագրությունների ներքո լույս են տեսել Մ. Գորկու, Զ.Գ. Բայրոնի, Վիկ. Հյուգոյի, Հ. Իբսենի, Ռ. Թագորի, Մ. Կորեյի, Ֆր. Կոպպեի, Ֆր. դը Կիրելի, Ա. Կոնան Դոյլի, Լ. Ուելլեսի, Գաբր. Դ'Անուոյի, Իվ. Ժիրկենի և այլոց բազմաթիվ երկասիրությունների նրա թարգմանությունները:

Տիրայր Սրբազանը զգալի ավանդ ունի հայագիտության բնագավառում: Անհրաժեշտ է առանձնացնել Բաբգեն վարդապետ Աղավելյանցի հետ համատեղ Մանվել Կյումուշ-խանեցու մեծ հետաքրքրություն ներկայացնող երկասիրության լույսընծայումը⁹, իսկ ավելի ուշ՝ բյուզանդական ու հայագիտական հետաքրքրություն ունեցող մի շարք հոդվածների հրատարակումը «Հայրենիք»¹⁰ և այլ ամսագրերի էջերում: Անսոխ էն մնացել Տիրայր Սրբազանի «Գավառական բառարան», «Ուղղումներ Բաֆֆիի «Խամսայի մեկիքությունները» գրքի», քառահատոր «Հոռմեական պատմությունն աղբյուր յուր մշակությի» և այլ աշխատություններ:

Հատկապես նշանակալից է նրա դերը Արևմտյան Եվրոպայի տարբեր ձեռագրապահոցներում գտնվող հայկական գրչագրերի հայտնաբերման և ուսումնասիրության բնագավառում: Նա հրատարակության է պատրաստել Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում պահվող հայերեն 132 ձեռագրերի¹¹ և Մանչեստրի Ջոն Ռայնոլդսի գրադարանի հայերեն 24 ձեռագրերի¹² նկարագրությունները¹³:

Այնուհանդերձ, Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի կյանքի գործը եղավ XIII դարի ականավոր բանաստեղծ Ֆրիկի ստեղծագործությունների Դիվանի հրատարակությունը: Ֆրիկի երկերի ուսումնասիրությամբ նա ձեռնամուխ էր եղել դեռևս 1907 թվականից: Գիտական պարբերականներում նա հրատարակել է մի շարք ուշագրավ հոդվածներ, որոնցից կարելի է առանձնացնել «Մոռացված մի հայ երգիչ» ուսումնասիրությունը¹⁴: Աշխատանքը, հանդերձ ընդարձակ ուսումնասիրությամբ, պատրաստ էր տպագրության դեռևս 1912 թ., որն, ի դեպ, հրատարակության էր ներառվել Ռուսաստանի Գիտությունների կայսերական ակադեմիայի կողմից և արժանացել մրցանակի: Տարիներ շարունակ Ֆրիկի Դիվանը սպասում էր իր հրատարակչին, և միայն 1952 թ. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Մեղքոնյան հիմնադրամը լույս ընծայեց այդ նշա-

⁹ Կիմիժխանեցի Մանուկ Շահինեան, Համառօտություն ձևեղևան և ղիպուածոց Մանուկ Շահինեան Կիմիժխանեցի պատմարանիս 1835 ի Սուրբ Խաչ վանս Դրիմոյ, րեն «Արարար», 1915, 1916, 1917:

¹⁰ Տիրայր Եպիսկոպոս, Չմշկիկ կայսեր ևամակը Աշոր թագավորին, րեն «Հայրենիք», ամսագիր, Բոսպոլ, 1937, էջ 123-127:

¹¹ Tirayre Wardapet, General catalogue of the armenian manuscripts in the Bodleian librari at Oxford, 2167 էջ:

¹² Tirayre Wardapet, Catalogue of the armenian manuscripts in the sir John Rylands library at Manchester, 338 էջ:

¹³ Երկու ձեռագրացուցակներն էլ անսխիպ են, դրանք գտնվում են Մաշտոցի անվան Մարենադարանի արխիվային բաժնի Տիրայր Տեր-Հովհաննիսյանի ֆոնդում (թղթապանակ 118-122, նկարագրությունները հայերեն են):

¹⁴ «Արարար», 1918, էջ 64-88, 171-204:

նակալից աշխատությունը՝ Ֆրիկի երկերի ամբողջական բնագրով, ուսումնասիրությամբ, ծանոթագրություններով, հավելվածներով ու բառարանով¹⁵։ Գիտական քննադատությունը պատշաճ գնահատականի արժանացրեց կատարված աշխատանքը՝ այն համարելով կարևորագույն ներդրում հայագիտության ամուստանում¹⁶։

Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը մահացել է 89 տարեկան հասակում, 1956 թ. մարտի 29-ին, Նյու Յորքի Սեյնտ Լյուքս հիվանդանոցում։ Մահից քիչ առաջ իր հարուստ գրադարանն ու արխիվը նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Տիրայր Սրբազանն ուր որ լիներ, ինչ պաշտոն էլ որ զբաղեցներ, միշտ էլ սերտ, բարեկամական կապեր է պահպանել համակուրսեցիների, ընդհանրապես ճեմարանականների ու համախոհ մտավորականների հետ։ Դեռևս պետերթուրգյան պաշտոնավարության շրջանում նա հոգատարությամբ է շրջապատել ապագա ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին (Նիկողայոս Տեր-Ավետիքյան, 1871-1942 թթ.), որն այնքան կարիք էր զգում նյութական ու բարոյական աջակցության։ Հետագայում էլ, երբ Ադոնցն արդեն հայտնի պատմաբան էր և զբաղեցնում էր Բրյուսելի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը, շարունակել է մեծ հայագետին հնարավորինս օգտակար լինելու իր պատրաստական ընթացքը։ Խոսքը 1940 թ. Բելգիայի գերմանական ռազմակալման պայմաններում հիվանդ ու միայնակ Ն. Ադոնցին ԱՄՆ տեղափոխելու նրա թափած ջանքերի մասին է, որն, ավաղ, հնարավոր չեղավ իրականացնել։

Այսու ընթերցողներին ենք ներկայացնում Տիրայր Սրբազանի՝ Ն. Ադոնցին նվիրված հոշերից մի պատառիկ, որ գրվել է պատմաբանի մահվան լուրն ստանալուց անմիջապես հետո՝ 1942 թվականի ամռանը¹⁷։ Բերված հատվածը վերաբերում է Գևորգյան Ճեմարանի միատնակացին, առօրյային, ուսումնական պարապմունքներին, այնպես, ինչպես ընկալել է Սրբազանը և որ մնացել է նրա հիշողության մեջ։

Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի ձեռագիր-ամսփյա հոշերից այս հատվածն ընթերցողին ենք ներկայացնում անմշան կետադրական և ուղղագրական միջամտություններով։

¹⁵ Ֆրիկ, Դիան, Նյու Յորք, 1952, 756 էջ։

¹⁶ Մասնավորապես փնն Ա.Գ. Արքահամյան, Ֆրիկի «Դիանի» իրադարձության առթիվ, «Էջմիածին», 1954, հունվար, էջ 32-43։ Ն. Բյուրջյան, «Շողակաթ», ամսագիր, 1953, էջ 139-141։ Բ. Նոյիսյան, «Հասկ» ամսագիր, Բկրոթ, 1954, էջ 65-67 և այլն։

¹⁷ Տե՛ս Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ֆոնդ, 161։